

Հովհաննես Խ. Եղոյան

ՀԱՅԻ ԵՒ ԹՈՒՐՔԻ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՀԻՆ ՄՈԴԵԼՆԵՐԻ ՆՈՐԱԳՈՒՅՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆԸ Զ. ՊԻՊԵՌՅԱՆԻ «ԼԿՐՏԱԾԲ» ՎԵՊՈՒՄ*

Զավեն Պիպեռյանը (1921-1984) ստամբուլահայ վիպագրության իրապաշտ ուղղության ակնառու ներկայացուցիչներից է: Գրական ասպարեզ իշխելով 1950-1960-ական թվականներին, ստեղծագործելով Ստամբուլում, մի փոքր մասով նաև՝ Թեյրութում, որ հաճախ բաքնվում էր՝ իր ընդգծված դեմոկրատական հայցըների պատճառով քաղաքական հետապնդումներից խույս տալու համար, նա խոր հետագիծ ձգեց «մեծ քաղաքի» (Զահրատի բնութագրումով) հետպատերազմյան շրջանի ընկերային կյանքի գեղարվեստական քննության մեջ:

1950-1960-ական թվականները ստեղծագործական առումով, կարելի է ասել, արդյունավետ էին. Զ. Պիպեռյանը մեկը մյուսի հետևից հրատարակում է «Լկրտածը» վեպը (1959), «Ծովը» պատմվածքների ժողովածում (1961), այնուհետև՝ «Անկուսի սիրահարներ» (1962) վիպակը: Տասնյակ տարիներ նա շարունակում էր աշխատանքները «Մրջյուններու վերջալույսը» ծավալուն վեպի վրա: Վերջինս, սակայն, հրատարակվեց ավելի ուշ, 1984-ին: Արդեն մահվան մահճում գտնվող գրողին հասցնում են հենց նոր տպագրված վեպի ազդօրինակը: Հետմահու այս գիրքն արժանացավ «Էլիզ Այվազեան-Գալուկեան» մրցանակին:

Դիմադրական ոգու թելադրությամբ արձակագրի բնարուխ լավատեսությունը շատ արագ դարձավ ստեղծագործական կայուն հատկանիշ: Արձակագիրը հակված էր իրապաշտական պատկերային ճանաչողությամբ, համակողմանի կյանքի բնական զարգացումների դիտարկումներին: Առաջին տպագործությամբ՝ նրա հերոսների մաքառումի մեջ կարելի է արձանագրել գոյապաշտության էական տարրեր, անգամ նատուրալիստական ընկալման նախահիմք, սակայն Զ. Պիպեռյանի բնագրային ուսումնասիրությունը զայիս է վկայելու, որ նրա մոտ իրապաշտական ուղղվածությունը գերիշխում է՝ հոգեբանական նուրբ բացահայտումներով: Իրեն բարբագրությամ գրական ճանաչողության ձև, կարելի է ասել, նա դա ածանցում է Հակոբ Օշականից: Միաժամանակ նկատենք, որ Զ. Պիպեռյանի հերոսները պատմության ընթացքը վերակազմելու ունակ չեն այնպէս, ինչպես օշականյան համապատկեր կազմած վիպական տիպարներն են անում: Այստեղ չեք տեսնի Հաճի Ստեփանի, Նազիկի, Զաքարենց Զաքարի, Մարիկ Մելիքխան-

* Հոդվածն ընդունվել է տպագրության 7.09.2011:

յանի հզոր ներքինով անհատներին:

Հոգեբանական ուրիշ բնույթի առանձնահատկություն է բերում Զ. Պիպեռյանի հերոսը. նրա գործողություններում երբեմն, կամ ավելի ստույգ՝ հաճախ, հզոր աշխարհի տեղաշարժերը կազմում են դիպախանդի առաջնորդությունը, որոնց մեջ անակնկալ զարգացումները ոչ քիչ դեպքերում դառնում են ճակատագրական: Ընդ որում՝ սոցիալական թշվառության խորացված քննության մեջ նատուրալիստական հակվածությունը պատահականության կնիք կարծես թե չունի: Այն գալիս է մի էական չափով փոխարինելու ազգային ըմբռնումի ծավալումներին և կարելի է ասել, որ շփման կետ ունի հայկական հայացքի մեկնական զգացողության հետ, որն անկարևոր հանգանաք չէ, ընդհակառակը՝ դիմորդը է դարձնում ազգային ներկապնակը, պատումին հաղորդում ազգային սուր ենթախորքը: Սեր կարծիքով, այս ճանապարհով է հայ գրողը սոցիալականից սահուն անցում կատարում ազգային-քաղաքական ենթաշերտերին, ինչը լավագույնս նկատվում է «Լկրտածը» վիպակում, որի նյուրը քաղված է 1940-ականների Ստամբուլի հայ-քուրքական կենցաղից: Ավելացնենք, որ բուն հարցադրումի ենթախորքի, հոգեբանական քննության մանրամասների շնորհիվ վիպական կառույցը ընդայնում է սահման-ները՝ ընդիուպ մոտենալով վեափ ժանրի տիրույթին:

Հեղինակի գրական վարպետության մատուցման եղանակը մենք որսում ենք ազգային նուրբ քողարկումներում՝ երբեմն «կիսատ» տրված հեռագնա պատկերների միջից: Հաճախ «հունական» կամ «հրեական» խաղարկումներում նուրբ ազգային գեղարվեստական «ուղղիչ» անցումներ կան, որոնք բնութագրում են գրողի ըմբռնումը և հայկական շեշտադրություններն առհասարակ:

«Լկրտածը» վեալը ընտանեկան պատումի շնորհիվ բացում է 1940-ական թթ. երկրորդ կեսի ժուրքիայի մռայլ ու գորշ տարիները: Գլխավոր հերոսուիին գեղեցիկ Կյուլյունն էր, որի ազգության հարցը «քաց է» ընթերցողների համար. ոչ մեկը չգիտի «դուրսապրծուկ» այդ աղջկա ծագումը, որը որը է մեծացել: Հեղինակի մտորումները հերոսուիու ազգային «ճշգրտումների» շուրջ հետապնդում են պարզ հնարանք՝ հաստատելու համար, որ նա հայուի է, թեև ամեն ինչ տրված է ընդգծված մշուշու ձևով:

Կյուլյունի կերպարի հետ շփումն սկսվում է միջնորդավորված, երկրորդական կերպարներ թուրովի ու Երանիկի խոսակցությունից, որոնք ներկայացնում են «անգույն» հայության առօրյան Ստամբուլում: Հարուստ տան սպասուիի Կյուլյունը նոյն ինքը՝ «լկրտածն» է, որի ճանապարհը դեափ մսագործ Ալիի խանութը անցնում է Երանիկենց տան կողքով: Ու դա առիք է, որ ծավալվի չարական «հայկական» բամբասանք նրա հասցեին.

«-Ըրք, հալայլիսի կտորը, դուն ալ: Աշխարհին պեավեքը ըլլայ նէ, ինչ պիտի ըլլայ: Սպասուիի՝ իշղի: Լործուկին մէկը:

- Ով գիտէ քանի՞ հոգիի հետ կըյօ-պըյօ կ'ընէ,- երազեց թուրու:

- Քա հարկան: Շունի պէս: Փողոցները: Աղուոր ըլլալո ի՞նչ պէտք կայ, ատանկ ըլլալէն ետք»¹:

Նրանք, մեկը մյուսին ընդհատելով, «հաստատում են» իրքն փաստ՝ իրենց երևակայությունը. «Չիտեմ, մեղքը ծիտը... Տղան կը գործածէ կոր եղեր լկրտածը...»²: Իհարկե, խոսքը խնամակալ ընտանիքի մասին է, քանի որ այդ ընտանիքի

1 Զաւեն Պիպեռյան, Լկրտածը, Խթանպուլ, 1959, էջ 3:

2 Նոյն տեղում:

որդիմ՝ Էրոլը, սպասուհուն դարձրել է հոմանուիի:

Զ. Պիտեյյանը ընթերցողին նախապատրաստում է դեպքերի հետագա զարգացումերին՝ մանկամարդ աղջկա նկարագիրը բացահայտելով նաև «կողմնակի» գնահատումներով, ձգած տպավորությամբ, դրական ու բացասական հիշատակություններով, որոնք ողջ վեպի ընթացքում կերպավորման ուժգնություն են պահպանում: Սա գրողի գեղարվեստական յուրահատուկ հնարանքն է, ինչը հնարավորություն է տալիս Կյուլյունի կերպարի վրա լուսարձակ նետել ամենասարքեր անկյուններից:

Որդեգրելով և Կյուլյունին հոգեզավակ հայտարարելով՝ Օսման թեյն առաջին հայացքից բարեգործ է ներկայանում հասարակությանը, սակայն ընտանիքի ներքին ենթաշերտերին անդադանալով՝ հեղինակն աստիճանաբար բացահայտում է իրական շարժադիրները: Դրա շնորհիվ Օսման թեյն ազատվում է հարկային բեռից, նաև Կյուլյունին, որպես աղախնի, մասնավճար տալուց: Երևույթը Կյուլյունին զվարճանքի խաղալիք դարձնելու հեռանկար է Օսման թեյի որդու համար, ինչը դեռ S. Կամարականի, Գ.ր. Զոհրապի ժամանակներից «պուական» գրական ափանողոյք էր:

Զ. Պիտեյյանի վեպում Կյուլյուն-Էրոլ հարաբերությունները մեզ հիշեցնում են Գ.ր. Զոհրապի «Փոստալ» նովելը: «Փոստալ» և «Լկրտածք» գործերում երկու խեղված ճակատագրեր են, երկու դեպքում էլ՝ ընտանեկան դաժանության գոհեր: Գ.ր. Զոհրապը մի քանի էջերում կարողացել է տալ երևույթի ողբերգական զգայնությունը, ինչը գրական վարպետության խնդիր էր: Նրա Տիգրանուիին Կյուլյունի անցյալի ստվերն է: Իսկ ահա Զ. Պիտեյյանի հեռահար նպատակը Թուլի նորագոյն շրջանում իին վարք ու բարքի վերարբնացումն էր: Հարուստների շարունակական անպատճենությունը իշխում էր ամենուր հենց այս խորքի վրա հեղինակը ներկայացնում է Կյուլյունին, որը միջավայրի բարոյական զոհաբերման զինն էր:

Առաջին հայացքից բվում է, թե Կյուլյունը բախտավոր է ու պիտի շնորհակալ լինի իր նոր «ծնողներին»՝ Օսման թեյին ու նրա կնոջը՝ Մյուպեճելին, սակայն հեղինակը, հերոսուհու հիշողություններին ապավինելով, բացահայտում է աղջկա խեղճությունը: Երբ մի քանի տարվա ընդմիջումից հետո քուրք մեծահարուստ շփացած երիտասարդը վերատին փորձում էր տիրանալ աղջկան, վերջինս արդեն մսավաճառի «ընկերուիին» էր: Կյուլյունը երկար ժամանակ «խաղացել է» խանության Ալիի զգացումների հետ, որի հետ սիրահետումները անցնում են վտանգավորության սահմանը: Մի որոշ շրջան նրան գրափում են մսավաճառ տղայի բարեկեցիկ կյանքի սին խոստումները, որը, ի տրիտուր ընտանիքի անդամների «հոգածության», իրականին մոտ ապագա էր բվում, սակայն աղջկա՝ արտակարգ գեղեցիկ դարձող, ներքնապես օրեցօր հարստացող անձի համար նվաստացուցիչ էին կիսամուր, կեղսոտ փողոցների անկյուններում Ալիի հետ զաղտնի հանդիպումները, որոնք ինքը՝ Կյուլյունը, նմանեցնում էր «Սերսափել» ամսագրի էջերում պատկերված նկարների աղջիկների վարքագծին, իսկ զուգընկեր Ալին երազված տղամարդը չէր այլևս Էրոլի կողքին՝ «միս կը հոտէր»:

Սա դեռ ամենը չէր. Էրոլը համալսարանական կարիերայի ճանապարհին գլուխցում էր, որ պետք է աստիճանաբար հեռացնել իրենից աղջկան՝ պատեհանպատեհի հիշեցնելով նրա խոնարի ծագումը և հակադրելով իր բարձրաշխարհիկ դիրքին: Բարոյական վիճակը Կյուլյունին հուշում է, որ վատ խաղի մեջ է:

Երկու հնարավոր ընտրության դեպքում ճգմվողը, զոհը ինքն է լինելու: Թերև է թվում նրա սիրախաղը Ալիի հետ, որին չեր էլ սիրում, բայց դա փրկության միջամկյալ վիճակ էր իր ճակատազրի ողբերգական գերմանական ճանապարհին: Խարուսիկ փրկություն:

Քարեկեցիկ կյանքով ապրող, մտավորական հովերով լցված Էրոլը, բնական է, մի քանի աստիճանով քարձոր է մսավաճառից: Խնդիրն ավելի հարուցիչ է, քանի որ մսավաճառը սոցիալական հակակրանք ունի մեծատունների նկատմամբ: Կյուլյուն-Էրոլ հարաբերությունը «կատաղութեամբ կը վարակէ» Ալիին, որ փորձում է պահպանել իր «ունեցածը», սակայն հասկանում է, որ «գաղափարի դիրքին վրայ» աստիճանաբար կորցնում է սիրած աղջկան:

Կյուլյունի խաղն Ալիի ու Էրոլի միջև ամեններն էլ պատահական չէ. դարասկզբին մեր ժողովրդին բաժին հասած դժբախտությունների պատճառներից մեկը գոյատևման երկակի կամ եռակի խաղն էր մեծ տերությունների միջև, որը ստիպողաբար էր վարում: Զ. Պիպեռյանը վերախաղարկում է անցյալի պատմաքաղաքական մողելը՝ նորօրյա կենցաղային ենթահողով, ուր Կյուլյունը 20-րդ դարի առաջին քանինամյակի Հայաստանն է՝ քացված գերիզոր, օտար տերությունների խաղերին:

Էրոլի կերպարում «Եվրոպական» խորհրդանիշ կա, որ հրապույիր պես ցցված է Հայաստանի խեղճության «ընդմէջէն», մինչդեռ Ալին ավելի անմիջական «քուրքի» բնազրն է: Զ. Պիպեռյան արձակագիրը որքան էլ որ կտրված էր անցյալից, միևնույն է, նրան հուզում էին ժողովրդի պատմության առանցքային հարցերը, առեղծվածային անցյալը: Խորն է ենթախորքը. մենք, կարելի է ասել, դեռ կարծես դասեր չենք քաղել: Հերինակը կանխազգում է վտանգը: Աղջկա համար փրկություն թվացող սիրախաղն անցել էր անվտանգության բոլոր սահմանները. Կյուլյունն արդեն «քուրքական բնազրի» գերիշխանության տակ էր: Բնական է, որ Ալին առանց մտածելու, կույր բնազրի թելադրությամբ մորքում է իր ճիրաններում հայտնված Կյուլյունին: Երիտասարդ Մեղսագործը համոզված է, որ ինքն անպատճ է մնալու: Սպանությունից անմիջապես հետո մսագործ Ալին տեղափոխում է Ստամբուլի արևելյան (ասիական) հատվածը, ուր «Եվրոպական» խորհրդանիշն իր դիրքերը զիջում է «քուրքական» բնազրին: Սա Ստամբուլի երկրորդ երեսն է, որտեղ ազգային ու կրոնական ենթահողի վրա կատարված բռնությունները խրախուսվում են և անտես են օտար աշքերին: «Եվրոպական» գաղափարական հենքի դիրքերում զիջող Ալին միանգամից առավելություն է ստանում ասիական հատվածում, ուր գերիշխանությունը վերապահված է բնազրին ու ազգայնամոլությանը: Այս երևույթը բուրքական ազգայնական գաղափարախոսության նոր վերելքն է, «խաղը» դարձյալ վտանգավոր է դարձել. «անցյալից քարեր հավաքելու ժամանակն է», իսկ հայ ժողովուրդն էլ դեռևս «քարեր չի հավաքել» իր անցյալի դասերից: Հերթական «խաղն» ու նույն ողբերգությունը:

Զ. Պիպեռյանն աստիճանաբար հեռացնում է հերոսներին գոյության պայքարի թմրկահարումներից՝ բողոքի յուրատեսակ ձև դարձնելով քարեկեցության մերժումը: Կյուլյունի ազգային խնդիրը մշուշուտ քողնելով՝ նա առաջ է քաշում մի նոր հերոսի, որը մարզիկ է, կարծես հաջողակ, սակայն շրջապատը նրան նոյնպես թերահավատ է մոտենում, անգամ՝ անհանդուժող: Պատահական չէ, որ Էրոլն ու քուրք տղաները ծեծում են «հայկական բնափորություն» ցուցաբերած Արեսին:

«Լկրտածը» վեպում հայ «սերսերին» (դատարկապորտ, ցանցառ, ժողովրդախոսակցականում՝ նաև սարսադ – Հ. Ե.) դառնում է հեղինակի «մեկուսի», մարզինալ սերը, յուրատեսակ «քոքուր» (անգործ, ծոյլ ու քափառաշրջիկ մարդ, որ մեկուսացված է հասարակությունից – Հ. Ե.), դրւու մղված կյանքի լուսանցք:

Ամենին զարմանալի չէ, որ բանաստեղծական կալվածում նույնատիպ հարցադրումներին անդրադառնում էր բանաստեղծ Զարեհ Խորախունին՝ նոյն պուսահայ համայնքից, ինչը վկայում է հարցի նկատմամբ վերաբերմունքի «պղևական» արմատը: Կարելի է ասել, համընկնում են Զ. Պիպեռյանի ու Զ. Խորախունու հայացքները, թե ազգային «սխալը» ճակատագրական հետևանքներ է ունեցել: Բանաստեղծական դաշտում Զ. Խորախունու պատկերներն ավելի առարկայական են: Ո՞րն է Հայաստանի խորհուրդը՝

Հազիր արբունքն անցուցած
Դեռ քանին չհասած
Ան աղջիկ է փողոցի
որ կը կարքէ
որ կը շորքէ
կը կեղեք ու կ'երգէ
Կը հմայէ կը պառակտէ - մէկէն միսին կը ցատքէ
Տարփածուներն անասունի կը վերածէ - մէկէն միսին կը ձգէ
կատաղութեամբ կը վարակէ
կոռոյի տենադրվ կը ճարակէ
Արինաքան երունգներով երես ու սիրտ կը ճանկէ
Կ'անցնի կ'երթայ
ետին նախճիր
ետին մոխիր
ողբ կոծ նանիր...³:

Նկատենք, որ մեր գրականության մեջ հաճախ ենք հանդիպում Հայաստանի պատկերին՝ թերևարարությունում կնոջ շղարջի տակ, այսպիսի Հայաստան է ներկայացնում նաև Շահան Շահնուրը «Նահանջը առանց երգի» վեպում: Շարունակական է «հազիր արբունքն անցուցած» կին-Հայաստանի խաղը հզրների բերած ճակատագրի առջև, իբրև հետևանք՝ ողբերգական են կորուստները:

Անդրադառնալով Զ. Խորախունու «Դարապատում» ժողովածուին (Երևան, 2001), գրականագետ Ս. Դանիելյանն իրավացիորեն ընդգծում է. «Կենսագրություն ենք իյուսել, մեր փոքր երջանկությունների և մեծ տագնապների առհավատչյան: Մյանալու անմիջական դասեր քաղելու և քարեր հավաքելու, այսինքն՝ իմաստնանալու ժամանակը միշտ հետաձգել ենք աւելի կայուն, լուսաւոր օրերի: Մեր պատմությունն է, որ գիտենք, թվում է՝ գերազանց, մինչդեռ պատմությունը մեզ պատժում է պատրանքներին տրվող մեր մանկունակության համար»⁴:

Սեր կողմից նկատենք, որ Զ. Խորախունին թերզունյան փիլիսոփայության տեսանկյունից է անդրադառնում ազգային ենթահողին. բանաստեղծական պատկերները ներկայացնում են ողբերգությունների և հավերժորեն հարատևելու խոր-

3 Զարեհ Խորախունի, Դարապատում, Եր. 2001, էջ 13:

4 Նոյն տեղում: Տես նաև «Դարապատումի» համար գրված Ս. Դանիելյանի «Դարը՝ կշռաքար Զարեհ Խորախունու բանաստեղծական ափի մեջ» հոդվածը, էջ 9:

հուրդը:

Հարցադրումները նույնահանգ են Զ. Պիպեռյանի արձակում, այստեղ էլ հեղինակը դիմում է նյոթի մատուցման ռեալիստական եղանակին՝ այն երանգավորելով խորհրդապաշտության բազմազան տարրերով:

Չինադադարին հաջորդած տասնամյակներին թուրքահպատակ հայությունը շարունակում էր ապրել վախի ու անորոշության միջավայրում, ասեւ է, թե փոխվել են ժամանակները, սակայն մարդկային էությունը նույն է մնացել, ուստի զարմանալի չէ, որ համընկնում են երկու պոլսարբակ մտավորականների՝ Զ. Խրախունու ու Զ. Պիպեռյանի մոտեցումները։ Նրանց ներքին անորոշությունը հենց խաղին կուրորեն արվելու վտանգի զգացողությունն է, որն արտացոլված է բնագրային բովանդակության հանգույցներում։

Ժողովրդական կենսակերպի որոնումները Զ. Պիպեռյանի վիպագրության մեջ մեզ հետաքրքրում են մեկ այլ, ավելի իրապաշտական դիտանկյունից, ինչը ավելի մեծ ու տարողունակ բացահայտումների հնարավորություն է ստեղծում։ Պատմվածքներում և «Անկուտի սիրահարները» վեպում ընդվզող հեղինակն աստիճանաբար նահանջում է իր «Լերտածը» և «Մրջիններու վերջալույս» վեպերում։ Եթե «Անկուտի սիրահարները» վեպում մենք հանդիպում ենք «սերսերիների» կերպարների, ապա ուշ շրջանի վիպագրության մեջ նրանք աղոտ են ներկայացված։ Ազգայնամոլ ուժերի աստիճանական հզրացումն ատելություն էր սերմանում, ինչն անմիջապես նկատում է խորաքափանց արձակագիրը։ Մեր տպավորությամբ՝ Զ. Պիպեռյանի առաջին շրջանի գրաճանաչողական ընդվզումն աստիճանաբար իր տեղը զիջում է փիլիսոփայական յուրատեսակ համակերպությանը։ Հեղինակն առաջ է քաշում գրական ըմբռնումի մի նոր եզր, որը հուշում է շահից ու նյոթականից իրաժարումը։ Նրա «պայքարի» նոր ճանապարհը ազգային կեցության մեջ նոր մատնանշումներն են՝ հոգեբանության կողքին թերարժեքության բարդույթը, ավանդականի կողքին՝ ազգային հանդորժողականությունը, պոլսահայի ներքին ազատության դիմաց՝ նահանջի բացարձակացման միտումները 20-րդ դարի վերջին քառորդին։

Զ. Պիպեռյանը քաջ տիրապետում էր ֆրանսիական գրական միջավայրին, կատարում էր քարգմանական բազմածավալ և ուշագրավ աշխատանքներ (քերենք միայն քաղաքական «հակաքուրք» նշանառությամբ մեկ օրինակ. օտար ընթերցողին ինքն է, որ ներկայացրել է «Սև ոճիր»-ի նշանափոր հեղինակ Արամ Անտոնյանի «Քալիանյան պատերազմն»), սակայն գեղարվեստական փորձառության մեջ, կարելի է ասել, ինչ-ինչ չափով առաջնորդվում էր ոռուսական գրականության ընկերային որոնումներով։

Անտեսելու չէ, որ Զ. Պիպեռյանի վեպերի կառույցում նուրբ գծերով իրար են շաղախված Արևելքն ու Արևմուտքը՝ բախումի գունային թերև շղարշով, ինչպես նաև եվրոպականն ու ռուսականը՝ սոցիալական ու գեղագիտական ոճավորման իրենց յուրահատկություններով։ Ինքը բացում էր իր ժամանակի դեմքը, ներկայացնում ժողովրդի ծանրագույն վիճակների բազմերանգ ներկապնակը։

Կարելի է անվարան ասել, որ Զավեն Պիպեռյանը 20-րդ դարի մեր լավագույն իրապաշտ վիպասաններից է։

Summary

A NEW EXAMINATION OF THE OLD MODELS OF ARMENIAN AND TURK RELATIONS IN Z. PIPERYAN'S NOVEL, "LKRTATS"

Hovhannes K. Yeghoyan

Zaven Piperyan's creation was a new voice in modern Turkish-Armenian literature. The great writer understood profoundly the meaning of the new era of national literature, and his own accountability before time. For the development and progress of highly valuable literature, Z. Piperyan considered the psychological examination of wide swaths of society as a precondition for social perception, for the universal depth of beauty within the constant influence of the lessons of the national past.

The novel, , Lkrtats է which is one of the best examples of Western Armenian fiction writing, presents Turkish life and post-war misery of the past century. It is a reflection of the new process of Armenian-Turkish relations, in light of the redrawing of tragic historical memory. The Armenian woman, Kyulkun becomes the victim of Ali the butcher's passions who slaughters her with the call of "old blood" with "equanimity" just as his ancestors and comfortably removes himself toward the city's Asian section, the hint of which, from a historical perspective, is transparent. The feature of the new era is reflected in the novel; however Z. Piperyan's literary commitment in Turkish-Armenian life is the aspiration to overcome the inculcated fear of national existence and its complexities.